թոյ հանապազորդ կանթեղացն վառման, և ծախս օթեւանացն, ուստի զմաշկեղէն հանդերձ իւրեանց կազմեն և հողաբերս հայթայթեն։

Պարծեալ են ՚ի նոսա և ծերք, որք ոչ կարեն զպէտս անձանցն վճարել, միաբան այսպիսեացն առաւել հոգ տանին քան անձանց։ Եթէ յանկարծ ուրուք ՚ի միոջ շարժեցաւ յիշելով զանձկալի կերակուր, յայտնէ զախտ իւր միւսոյն, որ լաւագոյն քան զնա իցէ և միաբան աղօթս արարեալ, վաղվաղակի եկն յառողջութիւն։ Իսկ եթէ զայս դուռն մեղաց քակէ ոք, բազում վնասք արգելուն ՚ի նմանէ, զոր ոմնք բազմագլուխ գազան կարծեցին զարտաքսումն մարմնոյ. տես զի նոքա նախ զնա ապանին. և յայլ եւս բազում վնասակար գլխոցն նորա աներկիւղ դադարեցին ՚ի լերինն Խորեբայ. զի յերկրաւոր ցածութենէ՝ յերկնից բարձրութիւնն առանց անօթոյ մեղաց կարասցեն առ Տէրն իւրեանց վերաբերիլ, որպէս Մովսէս և Եղիա փառօք տեսանէր ՚ի Խորեբայ լերինն. և ես տառապեալս քան զամենայն մարդ, որ հեռացայ ՚ի հեռուստ ընդ տէրունեան շաւիղն ՚ի էառն Խորեբայ. և այժմ խոկ տեսի զծովով սքանչելի եղբարցն. և Քրիստոսի մարդասիրին փառք յաւիտեանս յաւիտենից ամէն,

---

# ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

## Ի՞ՆՉ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆ ՈՒՆԻ ՄԱՐԴ ՈՒՐԻՇ ԿԵՆԴԱՆԵԱՑ ՀԵՏ·

Համեմատելով մարդս աշխարհիս վերայ եղող արարածոց հետ՝ կ՚տեսնեմք, որ նա ամենէն կատարեալ և գլխաւոր էակն է։ Գլխաւորն է կ՚ասեմք անոր համար, որ մեզնէ քանի մի աստիճան վար՝ կան բիւրաւոր հրաշալի բոյսերու և զանազան կենդանիներու աշխարհ մը։ Զանոնք ալ Աստուած ստեղծեց, ուրեմն պարտական եմք զանոնք յարգել։ Մեր ամեն տեսած, շօշափած և զգացած բաները յԱստուծոյ ստեղծուած են։ Եթէ զԱստուած կ՚սիրեմք, ուրեմն նորա արարածներն ալ պէտք է մեզի սիրելի լինին։ Մեր երախտագիտութիւնը այն ատեն յայտնած կ՚լինիմք Աստուծոյ, եթէ նորա ամենառատ գթութեան բարիքները խոհեմութեամբ վայելեմք։ Այս հրաշալեաց աշխարհի վերայ ամփոփ ուշադրութեամբ նայելով և բնութեան բազմատեսակ հարստութիւնները տեսնելով՝ մեր միտքերը պէտք է ուղղեմք առ Այն՝ որ լի է սիրով և բարութեամբ։

Այն կենդանիք առ հասարակ մարդուս պէս շնչաւոր են և զգայուն. վասն զի մեզ նման կ՚զգան ցաւն ու բերկրութիւնը. իսկ շատ անգամ իրենց խելքովն ու հասկացողութիւնը մարդկային խելքի կարողութեան մօտ են, շատ անգամ և մարդը կ՚գերազանցեն իրենց մարմնոյ և կազմուածքի յատկութիւններովը,

Բոլոր չորքոտանիք մարդը իրենց տէր կ'ճանչնան, նորա իշխանութեան տակն են. նոյն իսկ անապատի վայրենի գազանները մարդ տեսած ատեն կ'վախնան և եթէ մօտենայ՝ կ'փախչին հեռուներ: Ուստի զարմանք չէ որ այն տեղերը՝ ուր ժամանակով գազաններու որջ ու կաղաղ էին, այժմ մարդիկ իրենց բնակարանները հիմներ են: Երբեմն միայն, և այն մարդոյ գրգռելէն կատաղած և կամ սաստիկ քաղցէ հալեկոտրուած, կ'համարձակին մարդոյ վերայ յարձակիլ իրենց գերագոյն ուժոյն աղուեններով: Առանց այս բնական երկիւղին, զոր Նախախնամութիւնը դրեր է արիւնուշտ գազանաց սիրտը, մարդկային ազգը ՚ի բնէ տկար, անզէն և մերկանդամ լինելով՝ վաղուց կատաղի կենդանեաց զոհ եղած կ'լինէր: Բայց վտանգաւոր կենդանեաց թիւը, համեմատելով ուրիշ կենդանեաց թուոյն հետ, որ մարդկային օգտի զուարճութեան և պիտոյքը լեցնելու համար ստեղծուած են, շատ աւելի սակաւ է:

Ընտանի կենդանիները մարդուս ամեն գործոց և ձեռնարկութեանց մէջ նորա օգնականներն են, շատ անգամ նորա պաշտպանը, շատ անգամ ևս նորա հաւատարիմ ընկերն ու բարեկամը: Անբաւ են ընտանի անասնոց մեզի համար ունեցած նիւթական օգուտները. նոքա են աղբիւր զանազան սննդական հարկաւոր նիւթերու. ինչպէս նոցա միսը կերակրոյ և մորթն ու կաշին զգենլեաց համար:

Ուրիշ կենդանիներն ալ կ'օգնեն մարդուս իրենց ուժովը բեռնակրութեան պաշտօնը դիւրացնելու, և իրենց արագութեամբը մարդկային հեռաւոր առևտրական հաղորդակցութիւնները փութացնելու: Նոքա հարկաւոր են դաշտերը հերկելու, և արօրով չորացած թանձրացած երկիրը պարարտացնելու և զայն սերմնելու յարմար ընելու համար: Ուրիշներն ալ ուղեկից մարդոյ, պահապան նորա բնակութեանը, հսկող կենաց ապահովութեանը և գործիք զանազան զուարճութիւնները կատարելու:

Չկայ այնպիսի անօգնական ու աղքատ մարդ, զոր անասունք չմխիթարեն և չթեթևցնեն նորա վշտերը: Նայեցէք բազմամարդ քաղաքաց հրապարակներու վերայէն անցնող կոյրերու վերայ: Նոքա աղքատ են չունին ոչ բարեկամ, ոչ ազգական, և ոչ մէկը, որ տրտմակից լինի իրենց, չունին առաջնորդ զինքը շրջապատող խաւարին մէջ. միայն հաւատարիմ շունը զայն չթողուր. նա է նոցա առաջնորդը, ուղեկիցը, պաշտպանն ու պահապանը:

Նա անտրտունջ աղքատի կենաց նեղութիւններուն ու թշուառութիւններուն մասնակից կ'լինի. ուրիշներուն ոչ շոյելը և ոչ բռնութիւնը կարող է զինքը տիրոջմէն բաժանել: Նոյն իսկ մահուան անկողնոյն մէջ միայնակ չձգեր զնա:

Երբ ճանապարհորդ մի միայնակ մթա-

պատ անտառներու մէջէն կ՚անցնի, Նորա չորս կողմը թռչունները կ՚թռչտին ճռուողելով. նոյա դայլայլիկը ճանապարհորդը կ՚մխիթարեն և կարծես թէ ճանապարհը կը կարճեցընեն։ Որթուն աքաղաղը իւր սուր ձայնովը գործունեայ մշակը կ՚զարթեցընէ առաւօտեան աշխատանքի ձեռք զարնելու համար։ Երբ նա ցօղաշաղախ դաշտը կ՚ելնէ առաւօտեան զովին՝ օդուն մէջ թռչունները ճախրելով առաւօտեան երգը կ՚երգեն և կարծես թէ մարդոյ միտքը կ՚ուզեն ձգել առաւօտեան աղօթքը։

Երբ աշխատանքէ յոգնած կ՚դադարի մշակը՝ մեղուն անդադար ծաղկէ ծաղիկ թռչտելով ձմեռուան մեղր հաւաքելու, և ժրաջան մրջիւնը նոյնպէս պաշար ժողովելու համար, իրենց այս ազդու օրինակովը ուժաթափ մշակին սիրտը նոր ոյժ կ՚ազդեն և կարծես խոսխոյս կուտան իրեն չը քանիլ, այլ արօրն ու խոփը յառաջ մղել քաջութեամբ։

Գիւղուն վերայ գեղեցկափետուր թռչունները քաղցրաձայն երգելով իրենց բոյներ կ՚հիւսեն, մանր ճճիներ կ՚ժողովեն և սքանչելի զուարթութեամբ իրենց ձագերուն կ՚տանին։ Նոքա մշակին միտքը կ՚ձգեն զաւակներն ու ամուսինը, զորս պիտի կերակրէ նա իւր աշխատանքին արդիւնքովը։

Ա՜ եթէ մարդս վար է անբան բայց աշխատասէր կենդանիէն, որ իւր պարտքերը կատարելու համար ամենածանր աշխատութեանց կ՚դիմանայ։

Երբ վերջապէս մշակը օրական աշխատանքը լմնցընելով յոգնած քրտնած իւր ընտանեաց կ՚դառնայ երեկոյեան հանգստութիւն վայելելու, այն ատեն ևս կենդանիներէն շատերը արթուն են։ Կարծես մշակին աշխատանքը վարձատրելու համար, մերձակայ հովտին մէջ սոխակը անքուն կ՚հսկէ և գիշերուան խորին լռութիւնը իւր քաղցրահնչիւն դայլայլիկովը կ՚ընդհատէ։

Աստուածային Նախախնամութիւնը, ինչպէս որ կերևի, ոչ միայն մարդուս պաշտպանութեան համար ստեղծեր է կենդանիները, ոչ միայն նորան կերակուր, հագուստ և զուարճութիւն ընձեռելու համար, հապա միանգամայն, իբրև խրախուսիչ մեր պարտքերը ճշդտութեամբ կատարելու, իբրև մշտաբորբոք Դաստիարակներ և սքանչելի օրինակներ աշխատասիրութեան։

Եթէ կգտնուին կենդանեաց մէջ զմեզ կ՚րակրողներ, մեզի բարեկամներ, հաւատարիմ պահապաններ. ապա ուրեմն մեք ևս պարտական եմք ճանչնալ նոցա յարգն ու արժէքը, չ՚վնասել նա և մեզի անօգուտ եղողներուն, և երբէք չ՚մոռանալ որ նոքա ևս մեզ նման արարածներ են և ունին հասարակախնամ Տէր և Աստուած։ Իբրև քրիստոնեայ, իբրև բանական խոհեմ արարածներ լոկ անսահման իշխանութիւն չունիմք կենդանեաց վերայ, ունիմք նաև քանի մի պարտքեր։ Մեր կենդանիս ունեցած պարտքերնիս խիստ քիչ է. վասն զի մեր

նոցա հետ ունեցած յարաբերութիւնն մը ունի իւր որոշ սահմանը ։

Նաև որոշեալ քիչ են մեր պարտքերը, ուստի մեղք ու ամօթ է անկատար թողուլ զանոնք. և անոնց կատարումը պէտք է լինի բնականապէս խղճմտանքով և առանց խտրութեան ։

Մեր անձը պաշտպանելու համար իրաւունք ունիմք վնասակար կենդանիները մեռցնելու. մեղք չէ մորթել այնպիսիները, որ հարկաւոր են մեզ կերակրոյ, հագուստի, մանաւանդ բանիւ երկարաւոր կեանքի կարևոր պիտոյքները լեցընելու համար։ Բայց միթէ իրաւունք ունի՞մք առանց ստիպողական պատճառի չարչարել նաև զանոնք կամ առանց խղճի սպանել միայն վայրկենական զուարճութեան համար. իրաւունք ունի՞մք նոյն իսկ վնասակար և վտանգաւոր կենդանիներուն, մեր զբօսանքին համար, ըմպանութեան նորանոր և սարսափելի հնարքներ մտածել և ախորժիլ տեսնելով նոցա մահուանէ առաջ կրած սոսկալի չարչարանքները։ Խղճմտանքը մեզ կ՚պատուիրէ որչափ կարելի է շուտցընել և թեթևցընել կենդանեաց մահը ։

(շարունակելի)

Նոր տարւոյ առթիւ՝ կաղանդի առաջին իրիկուն՝ մինչդեռ ըստ սովորութեան (1) համայն միաբանութիւն Ս. Աթոռոյս՝ եպիսկոպոսունք, վարդապետք, սարկաւագունք և դպիրք, ևս և աշխարհական աստիճանաւորք և պաշտօնատարք դիւանատան Սինօդի և կրաւարար տպարանի Էջմիածնայ գաւառի՝ ժողովուած էին ՚ի սրահ Վեհարանի՝ Նորին Սրբազնագոյն Վեհափառութեան՝ Կաթողիկոսի ամենայն Հայոց՝ Նոր տարին շնորհաւորելու և իւրեանց որդիական ջերմեռանդն մեծարանք և հարազատութիւնը յայտնելու համար, բոլոր աշակերտք Ժառանգաւորաց վարժարանի Ս. Աթոռոյս՝ իւրեանց դաստուաց և դաստիարակաց հետ ՚ի մտասին՝ ներկայացան Նորին Վեհափառութեան։ Եւ ՚ի նոցանէ երկու պատանիք ՚ի դիմաց ընկերաց գրաւոր ուղերձներ նուիրեցին Վեհափառ Հայրապետին. իսկ միւսն հանդիսին մէջ ընթերցաւ իւր ճառը։ Վեհ. Կաթողիկոսը քաջալերեց աշակերտները ասելով թէ. „Ուսման ասպարէզը բաց է ձեր առջև. այժմ ունիք բարեկիրթ վարժապետներ. և ինչպէս որ ձեր ընկերաց ճառախօսութեան մէջ կերևի, ձեր ուսումնասիրութիւնը օր ըստ օրէ կաճի, ես ևս կը ցանկամ որ Նոր տարւոյն հետ նոր պտուղներ ցուցանէք ուսման և բարոյականութեան մէջ։“

Կարդացուած ճառերը արժան կը համարիմք տպագրել՝ նախ՝ ի խրախոյս նոցա աշխատասէր հեղինակաց և երկրորդ՝ ի տեղեկութիւն Ազգիս թէ՝ ո՛րչափ արթնցած են Ս. Աթոռոյս ժառան_

1) Ինչպէս նաև մենաստանի սրահը պտղեղինաց և մրգեղինաց և այլն սեղան մի պատրաստուելով, նախագահութեամբ Վ. Ե. Հ. Կաթողիկոսի եկողները սակաւ ինչ կը վայելեն սեղանի պատրաստութիւններէն, ևս բարեմաղթութիւններէն զինի իւրաքանչիւրը կը վերադառնայ իր հանգստարանը։